ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ - ՄԱՐԶԱԿԱՆ ԲՈՒՀԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Չատինյան Աշոտ
Հայաստանի ֆիզկուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ,
Հայաստան

Համառոտ ներածական: Հոդվածում ներկայացված են «վաղօրոք պլանավորված սխալներով» դասախոսության գործածման նպատակահարմարությունը և առանձնահատկությունները ֆիզկուլտուրային-մարզական բուհի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական գործընթացներում: Պարզաբանվել են նախատեսված սխալների օպտիմալ քանակը, դասախոսության ընթացքում դրանց առաջարկման և քննարկման ժանամակահատվածները, գործածման կուրսը և այլ հարցեր:

***Բանալի բառեր**: Ֆիզկուլտուրային-մարզական բուհ, ուսումնական գործընթաց, ուսանողներ, մագիստրանտներ, դասախոսության արդի ձևեր:*

Հիմնախնդիրը: Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքը ձևավորող և բարեփոխումներ իրականացնող 48 երկիր-անդամներից մեկն է: Բարեփոխումները միտված են ուսումնական ծրագրերի և ուսուցման գործընթացների կատարելագործմանը, որոնք այլ միջոցառումներին զուգահեռ նախատեսում են նաև դասախոսությունների արդի ձևերի ակտիվ օգտագործում՝ հաշվի առնելով դրանց լայն ու բազմաբնույթ հնարավորությունները: Ավանդական (տեղեկատվական) դասախոսությունների համեմատ վերջիններս իրականացնում են բազմաթիվ կարևոր գործառույթներ՝ ակտիվացնող, զարգացնող, դրդապատճառային, դաստիարակող [3, էջ 35]:

Որոշ մասնագետների կարծիքով անհրաժեշտ են ուսումնական նյութի ձեռքբերման նոր աղբյուրների առկայությունը և հասանելիությունը, թուլանում են տեղեկատվություն հաղորդելու ավանդական դասախոսության «առաջատար դիրքերը», ինչը ավելի է կարևորում ուսումնական գործընթացում դասախոսության նոր ձևերի կիրառումը [6, էջ 39-40]:

Հաշվի առնելով եվրոպական բարձրագույն կրթության համակարգում լսարանային ժամերի փոքր ծավալը և կրճատման միտումը, ինչպես նաև ֆիզկուլտուրային-մարզական բուհի ուսումնական գործընթացի կազմակերպման

առանձնահատկությունները՝ ուսանող-մարզիկների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացման գործում տեսագործնական կարևոր նշանակություն ունի դասախոսությունների նոր ձևերի գործածման հնարավորությունների և արդյունավետության ուսումնասիրման հիմնախնդիրը:

Հրատարակությունների կարճ վերլուծություն: Ուսումնական և գիտական գրական աղբյուրներում ներկայացված են արդի դասախոսությունների ձևերը՝ «վաղօրոք պլանավորված սխալներով», «դասախոսություն՝ երկուսով», «դասախոսություն՝ մամուլի ասուլիս», պարզաբանված են դրանց բովանդակային կողմը, անցկացման ընդհանուր սկզբունքները կամ կիրառման արդյունքները [4, էջ 42; 5, էջ 55-58; 8, էջ 109-113; 9, էջ 328-329]: Այսպես, երաժիշտների պատրաստության գործընթացում «դասախոսություն՝ երկուսով» ձևը հնարավորություն է տալիս լուծելու բազմաթիվ դիդակտիկական խնդիրներ՝ «դասախոսական նյութի զուտ բացատրման և տեսական շարադրման, ուսանողների ընկալման պասիվության հաղթահարում, նրանց մտածողության ու ստեղծագործական գործունեության ակտիվացում...» [5, էջ 58]: Նովոսիբիրսկ քաղաքի պետական տեխնիկական համալսարանի դասախոսների 62 %-ը «հավատարիմ է» ավանդական դասախոսությունների անցկացմանը, նրանց 59 %-ը, սակայն, գիտակցում է արդի պայմաններում դասախոսության ձևերի փոփոխության անհրաժեշտությունը [3, էջ 302]: Անհրաժեշտ է հավելել, որ այս և նման հետազոտություններում չեն նկարագրվում դասախոսությունների նոր ձևերի կազմակերպման և գործնականում կիրառման արդյունավետ պայմանները:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել «վաղօրոք պլանավորված սխալներով» դասախոսությունների գործածման առանձնահատկությունները ֆիզկուլտուրային-մարզական բուհի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական գործընթացում:

Հետազոտության նորույթը: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (ՀՖԿՍՊԻ) առկա ուսուցման բաժնի բակալավրիատի «Ընդհանուր և սպորտի մանկավարժություն», մագիստրատուրայի «Բարձրագույն կրթության մանկավարժություն» և Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) «Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի» բակալավրիատի «Մանկավարժության տեսություն» դասընթացներին «վաղօրոք պլանավորված սխալներով» դասախոսությունների կիրառման արդյունքում հնարավոր եղավ պարզել դրանց կազմակերպման հնարավորությունը և առանձնահատկությունները: Հստակեցվեցին մեկ դասախոսության ընթացքում սխալների բնույթը, սխալների օպտիմալ քանակը, բակալավրիատի տարբեր

կուրսերում դրանց կիրառման նպատակահարմարությունը, պարզաբանվեցին նաև բազմաթիվ այլ հարցեր:

Հիմնական նյութի շարադրանքը: Բարձրագույն կրթության արդի հարացույցի համատեքստում բարեփոխումների հիմնական ուղղությունը նախատեսում է ձևավորել այնպիսի մասնագետ, որը պատրաստ է ակտիվ գործունեությանը և ինքնադրսևորմանը: Այս առումով Մ. Մ. Ակուլիչը նշում է, որ ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ են «գիտելիքներին տիրապետող, կյանքին պատրաստված և սոցիալ-մշակութային տարածության մեջ կողմնորոշվող մասնագետներ...» [1, էջ 52]:

Ներկայումս եվրոպական բուհերի ուսումնական գործընթացում կարևորվում է ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը, որը գերազանցում է լսարանային ժամերը 3,5 և նույնիսկ 6 անգամ [8, էջ 125; 10, էջ 106]: Անկասկած, նման մոտեցումը ունի բազմաթիվ դրական կողմեր, սակայն զերծ չէ որոշ բացասական հետևանքներից: Մասնավորապես դասախոսությունների ժամերի կրճատման դեպքում թուլանում են ուսումնական գործընթացի դրդապատճառային, կազմակերպակողմնորոշիչ, մեթոդաբանական գործառույթները, ընկնում է ուսումնական գործընթացի հուզական բաղադրիչը, վերանում է դասախոսի և ուսանողի կենդանի հաղորդակցման առավելությունը:

Անհրաժեշտ է նշել, որ ֆիզկուլտուրային-մարզական բուհում նման հիմնախնդիրն ավելի է կարևորվում, քանզի այստեղ առկա են ուսումնական գործընթացի բովանդակային և կառուցվածքային բնույթի որոշ յուրահատկություններ: Մասնավորապես ՀՖԿՍՊԻ բակալավրիատի ուսումնական ժամերի մոտ 45 %-ը նախատեսված է ընտրված մարզաձևում գործնական պարապմունքների, ինչպես նաև մարմնամարզության, բասկետբոլի, աթլետիկայի, լողի և գործնական այլ առարկաների համար: Դրա հետ մեկտեղ ուսանողների գերակշռող մասն ակտիվորեն մարզվում է ինստիտուտի, ակումբների կամ Հայաստանի տարբեր հավաքական թիմերի կազմում: Ամենօրյա մարզումները, մասնակցությունն ուսումնամարզական հավաքներին և բազմաթիվ մրցումներին հանգեցնում է ուսանող-մարզիկների ֆիզիկական հոգնածությանը և կարող է բացասաբար անդրադառնալ դասերի հաճախումների, ուսումնական նյութի յուրացման խորության և կայունության վրա: Այդ պատճառով նվազում է գիտելիքների ինքնուրույն յուրացման հնարավորությունը, և այս տեսանկյունից ուսումնական գործընթացում կարևորվում է դասախոսությունների նոր տեսակների գործածման անհրաժեշտությունը:

Հայտնի է, որ «վաղօրոք պլանավորված սխալներով» դասախոսության մեջ նախօրոք ներմուծված են բովանդակային, մեթոդական, քերականական կամ այլ բնույթի որոշակի թվով սխալներ: Նման դասախոսության նպատակն է ակտիվացնել ուսանողների ուշադրությունը, մտածողական գործընթացները, զարգացնել ուսումնական նյութն օպերատիվ վերլուծելու, դասախոսության ոչ ճիշտ կամ սխալ տեղեկատվությունն առանձնացնելու կարողությունը: Որպես հսկողական գործառույթի վերջնարդյունք՝ այն ունի շտկողական նշանակություն և թույլ է տալիս դասախոսին բացահայտել թերությունները ներկայացվող նյութում՝ հետագայում կատարելով անհրաժեշտ ուղղումներ ու շտկումներ [8, էջ 112]: Ուսանողների խնդիրն է դասախոսության ընթացքում հայտնաբերել սխալները, նշել առանձին կամ կոնսպեկտում և դասի ավարտին ներկայացնել այն դասախոսին:

Փորձառու դասախոսը կարող է անմիջապես դասախոսության ընթացքում ներմուծել որոշակի սխալներ՝ հաշվի առնելով կոնկրետ թեմայի բովանդակության առանձնահատկությունները, լսարանի ընդհանուր վիճակը և դասի տեղն օրվա ուսումնական պարապմունքների շարքում:

Բուհի առաջին (ԵՊՀ) և երկրորդ (ՀՖԿՍՊԻ) կուրսերում նման դասախոսությունների ընթերցումը ակնհայտորեն ցույց տվեց դրանց գործածման նպատակահարմարությունը միայն 2-րդ կուրսում, երբ ուսանողները լիովին ներգրավվել են ուսումնական գործընթացում, տիրապետում են դասախոսություններն ունկնդրելու և կոնսպեկտավորելու հմտություններին, կարող են ակտիվ վերլուծել առաջարկվող ուսումնական նյութը: Դասախոսությունների այս ձևի գործածման սկզբնական փուլում անհրաժեշտ է պլանավորել հասարակ, հեշտ երևացող սխալներ՝ հետագայում դրանք բարդացնելով:

Հետազոտության արդյունքում պարզաբանվել է, որ դասախոսության այս տեսակի արդյունավետությունը կարող է ապահովել մասնավորապես 4-5 սխալ: Նույնիսկ նման պայմաններում հնարավոր է երկար ժամանակ ապահովել լսարանի ուշադրության և վերլուծական ակտիվության բարձր մակարդակ:

Ի տարբերություն գրականության մեջ առկա երաշխավորությունների՝ առաջադրված սխալների քննարկումը նպատակահարմար է իրականացնել հենց դրանց հայտնաբերման ընթացքում, ինչը նպաստում է լսողների ուշադրության երկարատև պահպանմանը և դասի ընթացքում ուսումնական նյութի ակտիվ վերլուծության ապահովմանը:

Կարելի է նաև այնպես կազմակերպել դասախոսության ընթացքը, որ նույնիսկ սխալի բացակայության դեպքում լսողները ներգրավվեն բանավեճի և ներկայացվող նյութի բովանդակության տարբեր դրույթների ու մտքերի ակտիվ քննարկմանը: Դասախոսի կողմից նման ուսումնական իրավիճակների նպատակային ստեղծումը հնարավորություն է տալիս դասին հաղորդելու ավելի բարձր հուզական հագեցվածություն և միաժամանակ լուծելու մտավոր կարողությունների ձևավորման կարևոր խնդիրը:

Որոշ դեպքերում կարելի է դասի հիմնական բաժնի սկզբնամասում որպես «նախավարժանք» առաջարկել պարզ, աչքի ընկնող սխալներ, ինչի շնորհիվ լսողները, կենտրոնացնելով ուշադրությունը, կնախապատրաստվեն ուսումնական խնդիրների հետագա լուծմանը:

ՀՖԿՍՊԻ ուսումնական գործընթացում նման դասախոսությունների բազմամյա կազմակերպումը վկայում է, որ դրանք ակտիվացնում են և ավելի երկար ժամանակահատված պահպանում ուսանող-մարզիկների ուշադրությունը, բարելավում են վերլուծական կարողությունները և էականորեն բարձրացնում են դասի հուզական բաղադրիչը:

Անկասկած, մագիստրանտների հետ աշխատելիս պլանավորվող սխալները պետք է լինեն ավելի բարդ, սակայն դրանց ընդհանուր քանակը կարևոր է պահպանել երաշխավորված քանակի սահմաններում: Հակառակ դեպքում լարվածության պատճառով բարձրանում է հոգնածության աստիճանը, և որպես հետևանք՝ նվազում է հետաքրքրությունն ուսումնական նյութի նկատմամբ: Հավելենք, որ նման դասախոսության ընթացքում անհրաժեշտ է առնվազն 1-2 անգամ կազմակերպել որոշակի մտավոր «հանգիստ»՝ ուսանողներին տրամադրելով համեմատաբար ավելի դյուրին և սխալ չպարունակող դասախոսության նյութ:

Դասախոսությունների այս ձևի կազմակերպման մյուս կողմն առնչվում է ուսումնական կիսամյակում դրանց կիրառման հաճախականությանը: Անկասկած, «վաղօրոք պլանավորված սխալներով» դասախոսությունների բազմակի անցկացումը կիսամյակի ընթացքում նպատակահարմար չէ, քանզի դա կարող է հանգեցնել ուսումնական նյութի մատուցման նման ձևի նկատմամբ հետաքրքրության անկմանը:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ որոշ օբյեկտիվ պատճառներով (դասի տեղը ուսումնական օրվա գրաֆիկում, դրան նախորդող դասի բնույթը և այլն) լսարանը միշտ չէ, որ պատրաստ է ակտիվորեն մասնակցելու նման դասախոսություններին: Սակայն դրա զուգակցումը ավանդական դասախոսությունն-

ին կարող է նպաստել ուսումնահիմացական գործընթացի արդյունավետության ապահովմանը և պահպանմանը: Հավելենք, որ բարձրագույն կրթության ոլորտում մասնագետների պատրաստության գործընթացում այս մոտեցման կողմնակիցներից է Օ. Ի. Ժուրավլյովան [5, էջ 58]:

Չորս տարվա ընթացքում ՀՖԿՍՊԻ 2-րդ կուրսի 240 ուսանողների և 120 մագիստրանտների կարծիքների ուսումնասիրումը բացահայտեց, որ նրանց 68 %-ը և 91 %-ը դրական են վերաբերվում «վաղօրոք պլանավորված սխալներով» դասախոսությունների կազմակերպմանը: Նրանց կարծիքով դրանց գործածումն ավելի հետաքրքիր և յուրահատուկ է դարձնում ուսումնական գործընթացը, հանգեցնում է բարձր հուզականության առաջացմանն ու պահպանմանը, իսկ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումը, իմացական գործունեության ակտիվացումը՝ ավելի դյուրին ու մատչելի: Սակայն ոչ բոլոր ուսանողներն ու մագիստրանտներն էին կողմնակից նման դասախոսությունների կազմակերպմանը: Մասնավորապես, նրանց 15 %-ն ու 5 %-ը տվեցին բացասական կարծիք, իսկ 17 %-ն ու 4 %-ը չկողմնորոշվեցին այս հարցում:

Հավելենք, որ նման դասախոսությունների կազմակերպումը, բազմաթիվ խնդիրներ լուծելուց բացի, նպաստեց նաև ուսանողների գիտական հետաքրքրությունների ձևավորմանը, որի արդյունքում 2-րդ կուրսի ավարտին ուսանողների մոտ 10 %-ը ցանկացավ մասնակցել ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին:

Եզրակացություններ: Բազմամյա հետազոտության արդյունքում հնարավոր եղավ պարզաբանել «վաղօրոք պլանավորված սխալներով» դասխոսությունների կիրառման մեթոդական առանձնահատկությունները, բացահայտել ուսանող-մարզիկների և մագիստրանտների կարծիքները դասախոսությունների նման ձևի կազմակերպման նպատակահարմարության վերաբերյալ:

Հարցման արդյունքները վկայում են, որ ՀՖԿՍՊԻ առկա ուսուցման բաժնի 2-րդ կուրսի ուսանողների և մագիստրանտների 79,5 %-ը դրական է արտահայտվում նման դասախոսությունների կազմակերպման հարցին: Դրանց կիրառումը ֆիզկուլտուրային-մարզական բուհի ուսումնական գործընթացում դարձնում է դասախոսությունն ավելի հետաքրքիր, նպաստում է ուսանողների և մագիստրանտների որոշ մտավոր կարողությունների զարգացմանը, լուծում է ուսումնադաստիարակչական տարբեր խնդիրներ, էականորեն բարձրացնում է դասի հուզականությունը, ուժեղացնում է ուսանողների հետաքրքրությունը գիտական հետազոտությունների նկատմամբ:

Հետագա հետազոտության հեռանկարները: Որպես հետազոտության հեռանկար պետք է նշել արդի դասախոսությունների այլ ձևերի գործածման հարցը ՀՖԿՍՊԻ բակալավրիատի «Ընդհանուր և սպորտի մանկավարժություն» և մագիստրատուրայի «Բարձրագույն կրթության մանկավարժություն», ինչպես նաև «Էթնոմանկավարժություն» ուսումնական առարկաների դասավանդման գործընթացում: Պարզաբանման անհրաժեշտություն ունի նաև այս հիմնախնդիրը հեռակա ուսուցման բաժնի բակալավրիատում և մագիստրատուրայում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ակուլիչ Մ. Մ., Կրթությունը գլոբալիզացիայի պայմաններում // Համալսարանական կառավարում, 2005, № 5, էջ 50-57, [Էլեկտրոնային ռեսուրս], Հասանելիության ռեժիմ: https://docplayer.ru/216744-Globalizaciya-i-universitet.html:
2. Աստաշովա Տ. Ա., Ժամանակակից դասախոսությունը ուսանողի տեսանկյունից. Զարգացման ճանապարհները // «Բաց կրթություն- 2014», №4, էջ 34-42, [Էլեկտրոնային ռեսուրս], Հասանելիության ռեժիմ: http://openedu.rea.ru/jour/article/view/426/340:
3. Աստաշովա Տ. Ա., Ժամանակակից դասախոսությունը ուսանողների և դասախոսների տեսանկյունից // Կրթական տեխնոլոգիաները և հասարակությունը, 2017, հատոր 20, № 3, էջ 299-308, [Էլեկտրոնային ռեսուրս], Հասանելիության ռեժիմ: https://readera.ru/140224508:
4. Եգորով Վ. Վ., Սկիբիցկի Է. Գ., Խռաբչենկով Վ. Գ., Բարձրագույն դպրոցի մանկավարժություն. Ուսումնական ձեռնարկ, Նովոսիբիրսկ: ՍԱՖԲԴ, 2008, էջ 42-43:
5. Ժուռավլյովա Օ. Ի., Երկուսով դասախոսությունը երաժիշտ-կատարողների բուհական ուսուցման համակարգում // Մանկավարժական գիտափորձ. Մոտեցումները և հիմնախնդիրները, 2016, № 2, էջ 51-58:
6. Զազվյազինսկի Վ. Ի., Բուհական դասախոսությունը ժամանակակից ուսումնական գործընթացի կառուցվածքում// «Կրթություն և գիտություն», 2014, №2, էջ 34-46:
7. Նորարարությունը կրթության մեջ. Գերմանիայի և ԱՄՆ-ի փորձը (Մ. Վ. Լոմոնոսովի անվան ՄՊՀ փիլիսոփայության ֆակուլտետի մասնագետների կողմից կատարված համեմատական վերլուծություն), [Էլեկտրոնային ռեսուրս], Հասանելիության ռեժիմ: http://inpro.msu.ru/PDF/inno1.pdf:
8. Բարձրագույն դպրոցի մանկավարժություն և հոգեբանություն. Ուսումնական ձեռնարկ, Հեղինակությամբ Մ. Վ. Բուլանովա-Տոպորկովայի, Դոնի Ռոստով, «Ֆենիկս», 2006, էջ 109-125:
9. Պլոտնիկովա Ե. Գ., Ժամանակակից դասախոսությունը բուհում. Կատարելագործման ուղիները// «Եվրասիական իրավաբանական հանդես», 2018, № 4 (119), էջ 328-329:

10. Սենաշենկո Վ., Ժալինինա Լ., Ուսանողների ինքնուրույն աշխատանքը. արդիական հիմնախնդիրները// «Բարձրագույն կրթությունը Ռուսաստանում», 2006, № 7, էջ 106:

СОВРЕМЕННЫЕ ФОРМЫ ЛЕКЦИЙ В УЧЕБНОМ ПРОЦЕССЕ ФИЗКУЛЬТУРНО-СПОРТИВНОГО ВУЗА

Чатинян Ашот
Государственный институт
физической культуры и спорта Армении
Армения

Аннотация

В статье представлены результаты изучения особенностей использования в учебном процессе физкультурно-спортивного вуза лекций «с заранее запланированными ошибками» и их влияния на учебную активность студентов и магистрантов.

Анализ литературы показал, что, хотя преподаватели многих вузов положительно относятся к новым активным формам лекций, однако они крайне редко используют их в своей практической деятельности. Организация учебного процесса в физкультурно-спортивном вузе имеет некоторые особенности, среди которых большой объем учебного времени, планируемого на практические занятия, а также участие многих студентов-спортсменов в составе сборных команд на учебно-тренировочных сборах и многочисленных соревнованиях. Все это сказывается на физической усталости студентов в течение учебного дня и как следствие – на трудности в выполнении самостоятельной учебной работы. Один из путей решения этой проблемы – более эффективное использование на аудиторных занятиях больших возможностей современных лекций.

Многолетнее использование в учебном процессе Государственного института физической культуры и спорта Армении лекций «с заранее запланированными ошибками» при прохождении в бакалавриате предмета «Общая педагогика и педагогика спорта», а также «Педагогика высшего образования» в магистратуре позволило выявить методические особенности их практического применения. В частности, в бакалавриате целесообразно такие лекции использовать лишь со II курса с 4-5-ю ошибками на одном уроке. Желательно обсуждение обнаруженных ошибок проводить не в конце урока, а по ходу чтения лекции. В магистратуре при одинаковом количестве запланированных ошибок степень их сложности должна быть более высокой. Примерно 79,5% студентов и магистрантов положительно оценили новую форму организации лекций, отметив их положительное влияние на эмоциональную насыщенность урока, неординарность проведения, доступность в овладении знаниями, формировании умений и навыков.

Ключевые слова: *физкультурно-спортивный вуз, учебный процесс, студенты, магистранты, современные формы лекций.*

Список использованной литературы

1. Акулич М.М., Образование в условиях глобализации // Университетское управление. – 2005. – № 5. – С. 50-57. [Электронный ресурс]. – Режим доступа: https://docplayer.ru/216744-Globalizaciya-i-universitet.html.

2. Асташова Т.А., Современная лекция глазами студента: пути развития // Открытое образование. – 2014. – №4. – С. 34-42. [Электронный ресурс]. – Режим доступа: http://openedu.rea.ru/jour/article/view/426/340.

3. Асташова Т.А., Современная лекция глазами студентов и преподавателей // Образовательные технологии и общество. – 2017. Т. 20. – № 3. – С. 299-308. [Электронный ресурс]. - Режим доступа: https://readera.ru/140224508.

4. Егоров В.В., Скибицкий Э.Г., Храпченков В.Г., Педагогика высшей школы: Учебное пособие. – Новосибирск: САФБД, 2008. – С. 42-43.

5. Журавлева О.И., Бинарная лекция в системе вузовского обучения музыкантов-исполнителей // Педагогический эксперимент: подходы и проблемы. – 2016. – № 2. – С. 51-58.

6. Загвязинский В.И., Вузовская лекция в структуре современного учебного процесса // Образование и наука. – 2014. – №2. – С. 34-46.

7. Инновационность в образовании: опыт Германии и США (сравнительный анализ, выполненный специалистами философского факультета МГУ им. М.В. Ломоносова). [Электронный ресурс] . – Режим доступа: http://inpro.msu.ru/PDF/inno1.pdf.

8. Педагогика и психология высшей школы: Учебное пособие. Под ред. М.В. Булановой-Топорковой. – Ростов н/Д.: Феникс, 2006. – С. 109-125.

9. Плотникова Е.Г., Современная лекция в вузе: пути совершенствования // Евразийский юридический журнал. – 2018. – № 4 (119). – С. 328-329.

10. Сенашенко В., Жалнина Л., Самостоятельная работа студентов: актуальные проблемы // Высшее образование в России. – 2006. – № 7. – С. 106.

THE NEW FORMS OF LECTURES IN THE EDUCATIONAL PROCESS OF PHYSICAL CULTURE AND SPORTS UNIVERSITIES

Ashot Chatinyan

Armenian State Institute of Physical Culture and Sport

Armenia

Summary

The article presents the results of studying the use of lectures with “pre-planned errors” in the educational process of Physical culture and Sports universities and their influence on the learning activity of baccalaureate and magistracy students. The literature analysis has shown that although teachers at many universities have a positive attitude towards new active forms of lectures, they use them extremely rarely in their practical work.

There are some peculiarities, which should be taken into account when organizing the educational process at Physical Culture and Sports Universities, such as – a large amount of time planned for practical training, as well as frequent participation of students – athletes in different training camps and competitions as members of National Teams. All this leads to physical fatigue of the students and consequently to difficulties in performing independent work. One of the ways to solve this problem is to use the possibilities of modern lectures more effectively.

Years of use lectures with “pre-planned errors” when reading lectures on “General Pedagogy and Pedagogy of Sports” in baccalaureate and “Pedagogy of Higher Education” in magistracy at the Armenian State Institute of Physical Culture and Sports allowed us to identify methodological features of their practical use. In baccalaureate, it is advisable to use them from the second year of

study and the member of errors should be not more than 4 or 5. The discussion of the detected errors is advisable to be conducted not at the end of the lesson, but during the lecture.

In the magistracy, the member of the planned errors should be the same, but the degree of their complexity higher. About 79.5% of baccalaureate and magistracy students positively evaluated the new form of lectures noting their positive impact on the emotional richness of the lesson, originality of conduct and accessibilities.

Keywords: *Physical culture and Sports universities, educational process, baccalaureate and magistracy students, the new forms of lectures.*

References:

1. Akulich M. M., Education in the context of globalization // University Management. - 2005. - № 5. - pp. 50-57. [Electronic resource]. - Access mode: https://docplayer.ru/216744-Globalizaciya-i-universitet.html.
2. Astashova T. A., Modern lecture through the students view: ways of development // Open Education. - 2014. - №4. - pp. 34-42. [Electronic resource]. - Access mode: http://openedu.rea.ru/-jour/article/view/426/340.
3. Astashova T. A., Modern lecture through the students and teachers view // Educational technologies and society. - 2017. V. 20. - № 3. - pp. 299-308. [Electronic resource]. - Access mode: https://readera.ru/140224508.
4. Egorov V. V., Skibitsky E. G., Khrapchenkov V. G., Higher School Pedagogy: Tutorial. - Novosibirsk: SAFBD, 2008. - pp. 42-43.
5. Zhuravleva O. I., Binary lecture in the system of high school education of performing musicians // Pedagogical experiment: approaches and problems. - 2016. - № 2. - pp. 51-58.
6. Zagvyazinsky V. I., University lecture in the structure of the modern educational process // Education and Science. - 2014. - №2. - pp. 34-46.
7. Innovation in education: the experience of Germany and the United States (comparative analysis performed by specialists of the Faculty of Philosophy of Moscow State University after M.V. Lomonosov. [Electronic resource]. - Access mode: http://inpro.msu.ru/PDF/inno1.pdf.
8. Pedagogy and psychology of higher education: Textbook. Ed. M.V. Bulanova-Toporkova. - Rostov n / D .: Phoenix, 2006. - pp. 109-125.
9. Plotnikova E. G., Modern lecture in high school: ways of improving // Eurasian Law Journal. - 2018. - № 4 (119). - pp. 328-329.
10. Senashenko V., Zhalnina L. Independent work of students: actual problems // Higher education in Russia. - 2006. - № 7. - pp. 106.

Материал был представлен и отправлен на рецензию: 17.07.2019
Принято к публикации: 30.08.2019
Рецензент: доктор пед.наук, доцент Армен Григорян

The material was submitted and sent to review: 17.07.2019
Was accepted for publication: 30.08.2019
Reviewer: Doctor of Sciences, Assoc. Prof. Armen Grigoryan